

ելանեն ի հաւատոց. եւ այլ բաղումս առնեն ան- 270
 կարգութիւնս ընդդէմ կանոնաց եկեղեցոյ լու-
 ծանելով զլուսնս, եւ գործեն քաղամ զանազան շարիս
 (զորս ոչ կարեմք արկանել ընդ գրով), ասելով
 թէ՛ որովհետեւ սուտ է կրօնքս քրիստոնէից, որ-
 պէս եւ նոքա ասեն «արասցեն զինչ եւ հաճեսցին
 սիրտք ձեր» որով հայհոյի անունն Աստուծոյ եւ 275
 վարդապետութիւնն ի մէջ հեթանոսաց: Ահա ոյս
 է պոպոզն ինչն արդեանցն. եւ զի պոպոզնս
 ասասցուք, մեք՝ որ բնակեալ եմք ի միջի այսպիսի
 ազգաց, որ ոչ հաւատան զքրիստոս Աստուած,
 եւ զպաշտօնեայն Քրիստոսի, այլ մանաւանդ կան 280
 ընդ մեզ խաղաղութեամբ եւ սիրով յաւետ եւս,
 զի յովով անգամ ընդդիմաբանեմք ընդ նոսա, եւ
 վիճեմք յաղազս Աստուածութեանն քրիստոսի,
 եւ օրինաց նորա. լինիմք ջատագովք քրիստոնէա-
 կան կրօնից, ոչ բմբոստանան մեզ. այլ միամտու- 285
 թեամբ ակն ածեն զմեզք, ընդ որոց Ռոմոսոսի
 իշխանութեամբն մակաղիմք եւ մեք. տայէ Կոս-
 տանդոսի Ռոմոսոսն Աստուած՝ հաստատութիւն
 թագաւորութեանն իւրոյ. որոյ վասն եւ մեք 290
 աղօթս յիմք եւ յաւետ մատուցանեմք, ըստ խրա-
 տու մեծին Պօղոսի, զի այնպէս հանդարտութեամբ
 վարեմք զկեանս մեր. որպէս եւ յաւուրս թա-
 գաւորացն մերոց, մինչ իշխանութիւնն մեր էր. եւ
 սա՛ որ այլազգ է, եւ ոչ պաշտօնեայ քրիստոնէու-
 թեանն հաւատոց խորհրոյ, այսպէս գլխով 295
 գլխայ եւ նախախնամեալ պահպանէ զմեզ թարց
 զզուանաց: Իսկ առ մեզ եկեալ պատրիքն՝ ոչ
 այսպէս, այլ ներհակութեամբ վարին ընդ մեզ՝
 խոչնդակն լինելով. եւ յորժամ ներհակիմք ան-
 կարգ արարմանց նոցին, զուր եւ ունայն բանիւք 300
 ամբաստան լինին առ մեծութիւն ձեր, եւ որո-
 անփորձ գորով՝ նոցին բանիցն հաւատայք. քանզի
 ի մէջ այլասեռից զՀայս հերձուածօրս եւ հերե-
 տիկոսս անուանեն: